

մարդիկ, որոնք հանգիստ և անդորր կեանք են որոնում, որոնք ուզում են իրենց փրկութեան ճանապարհը հեշտացնել, դնել իրենց այնպիսի վիճակի մէջ, որ մեղանշելու քիչ առիթներ ունենան: Իմ կարծիքով վանական կեանքը նախապատրաստութիւն պէտք է լինէր՝ մարդկանց ծառայելու համար: Թող միայնակեացները վանքերը քաշուեն, միայնութեան մէջ ժողովեն իրենց հոգեւոր ոյժերը և զարգացնեն, ապա դուրս գան աշխարհ և ծխական քահանաների ու սարկաւազների տեղերը բռնեն, որպէս զի, ընտանեկան կապերից ազատ լինելով, իրապէս բոլորին ցոյց տան, թէ կարելի է ըստ Աւետարանի կեանք ունենալ: Կալ վանքերից կարող են լաւ հովիւներ դուրս գալ, այն ինչ ներկայ հանդամանքներում մեր վանքերը հանգիստ և հայեցողական կեանք որոնող մարդկանց ապաստարան են: Կեանքի ներկայ պայմաններում մեր կուսակրօններն էլ չեն կարող ժողովրդին մեծ օգուտ բերել:

— Ռուսաց եկեղեցին յանձին Կիւելի մետրապոլիտ սրբազան Թէօֆնիստի մեծ կորուստ ունեցաւ յունուարի 22-ին, երբ նա իւր մահկանացուն կնքեց Պետերբուրգում, ուր եկել է Ս. Սինոդի նիստերին մասնակցելու: Սրբազան Թէօֆնիստը ծնուել է 1829 թ.-ին. նորա աշխարհային անունն եղել է Նազոր Իվանովիչ Լեբեդեւ: Նա եղել է առաջնորդ Աստրախանում, Պոդոլսկում, Վլադիմիրսկում, Նովոօբոդում, իսկ 1900 թուին նշանակուեց Կիւելի մետրապոլիտ: Հանգուցեալի տեղն այժմ Բարձրագոյն հրամանով Կիւելի մետրապոլիտ է նշանակուած Խարկովի արքեպիսկոպոս Սրբ. Ֆլաւիանը, որ առաջ էկզարխ էր Վրաստանում:

ԿԼԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

„НОВОСТИ“ լրագրի Հռովմի թղթակիցը ներկայումս Վատիկանում խօսակցութեան և մտահոգութեան նիւթ կաղմող մի անձնաւորութեան մասին է խօսում, որին, տիրող կարծիքների համաձայն, վիճակուած է մօտիկ ապագայում գլխաւոր դերը խաղալ. այդ կարգինալ Կապեչեւեատրօն է, որ նորերս ստացաւ՝ Պարօկիկ կարգինալի մահից յետոյ թափուր մնացած, եկեղեցու փոխ-կանցլերի պաշտօնը: Եկեղեցու փոխ-կանցլերի պաշտօնը ինքն ըստ ինքեան վերցրած մի անուանական բան է, սակայն կոնկրաւի օրերում իւր նշանակութիւնը կունենայ: Կարգինալ Կապեչեւեատրօն նշանաւոր տոհմից է և ծնուել է Նէապոլ քաղաքում: Նա իւր ամբողջ կեանքը անց է կացրել գրական աշխատանքներով: Մի քանի տարի շարունակ նա Մարդա-

ընտ թագուհու խոստովանահայրն է եղել և շնորհիւ իւր խոհեմութեան, լըջութեան և լայն հայեացքների՝ միջնորդ է հանդիսացել Վլիկինալի և Վատիկանի միջև: Կարդինալը ցօրս էլ իտալական մայր թագուհու հետ ամենալաւ յարաբերութեան մէջ է, որը միշտ Կապէչէլեատրոյի և Կարդինալ Գիբբոնսի լուսամիտ օգնութեանն էր դիմում, և նոքա աշխատել են որոշ չափով մեղմացնել իտալական արքայական տան և պապական աթոռի մէջ եղած անընական յարաբերութիւնները: Կարդինալ Կապէչէլեատրօն շատ բարեկամ է ամերիկական կարդինալ Գիբբոնսի և յայտնի կարդինալ Կոպպի հետ: Անկասկած է, որ երեք կարդինալները պէտք է իրար թնութիկունք լինեն. սակայն բոլոր նշանները ցոյց են տալիս, որ պապական իշխանութիւնը հասնելու է կարդինալ Գիբբոնսին, որը տասը տարով փոքր է Կապէչէլեատրոյից (ոս 69 տարեկան է): Ոչ-իտալացի պապ ունենալու գաղափարը աւելի և աւելի արձագանք է գտնում Վատիկանի միջնորդատում: Շատերը իրաւացի կերպով ենթադրում են, որ ոչ-իտալացի, կամ օտար երկրացի՝ պապը ս. Աթոռի քաղաքականութեան մէջ հաւասարակշռութիւն կմտցնէ և կկարողանայ Սալօյեան տան հետ ցանկալի, խաղաղ յարաբերութիւններ հաստատել: Կապէչէլեատրոյի փոխ-կանցլեր նշանակուելը հոգեւոր շրջաններում մեկնութիւնների առարկայ է դարձել: Բոլորի համար էլ պարզ է, որ նա մեծ դեր կխաղայ: Նա երեւի իւր շուրջը կփողովէ մի խումբ նոր մարդիկ, և առաջիկայ կոնկլաւի մէջ իւր ոյժը ցոյց կտայ:

—Ֆրանսիայում 1884 թուին օրէնք դարձաւ, որ ամուսնալուծութեան համար եկեղեցու որոշումը աւելորդ է. ամուսնական խնդիրները պէտք է վճռուեն հնարաւոր զիջողութեամբ, քաղաքացիական դատարաններում: Թէ որ աստիճանի արդարացան այն յոյսերը, որոնք կապուած էին այս օրէնքի հաստատման հետ, ցոյց է տալիս Լուի Ագրանի Ֆրանսիական մի հանդիսում արժարժած հետեւեալ ակտութիւնը. «Այն վստահութիւնը և յոյսերը, որ ունէին օրէնքի պաշտպանները, ներկայումս անփիճելի և ակնյայտնի կերպով ոչինչ են դարձել. իսկ բարեփոխութեան հակառակորդների երկիւղը ոչ միայն արդարացաւ, այլ իրականութիւնն աւելի տգեղութեամբ հանդէս եկաւ, քան առաջ կարելի էր նախատեսել: Ապահարդանք ընդհանուր դարձաւ հասարակութեան բոլոր խաւերի մէջ՝ շարունակելով աւելի և աւելի քանակութեամբ ընտանիքներ կազմալուծել: 1884 թուին, օրէնքի հրատարակութեան տարին՝ ապահարդանների թիւը 130-ից չէր անցնում, իսկ 1901 թուին արդէն 9000-ից էլ բարձրանում է: Լաւ էր, եթէ աճումը գոնէ այստեղ կանգ առ-

նէր, բայց 1901 և 1902 թուականները ցոյց են տալիս, որ բաժանուողների թիւը տարեցտարի, համեմատութեամբ նախկինի, աւելանում է: Նոր օրէնքն այսպիսով ըստ էութեան չբարեփոխեց ամուսնական կեանքը, այլ լոյս աշխարհ հանեց այն ցաւերը և վէրքերը, որոնք մինչև օրէնքի հրատարակուելը ծածկուած էին և գաղանի կերպով խանգարում էին ընտանեկան խաղաղութիւնը: Բայց միևնոյն ժամանակ այդ նոր օրէնքը անկարող եղաւ երկու ամուսինների մէջ եղած երկպառակութիւնները վերջացնելու, քանի որ դատարանները լցուեցան ամուսնական դանդառներով, քանի որ համբերատարութեան և ղեջողութեան ոգին ընտանեկան յարկից բոլորովին հեռացաւ»:

Լեզբանը այնուհետև մէջ է բերում Սենի նախկին մի դատախազի վկայութիւնից հետևեալ հետաքրքրական փաստերը. «Ամուսնալուծութեան վերաբերեալ դործերը շատ արագութեամբ են որոշուում: Երբ որ դործը գալիս է հողային սահմանների վնասի փոխարէն հատուցումն որոշելու խնդիրներին և ըն, հակաճառութիւնները շատ են տևում, փաստաբանները երկար ճառեր են խօսում, ընդդիմախօսելով իրար: Բայց երբ պսակ լուծելու մասին է խնդիրը և մի ամբողջ ընտանիք պէտք է քանդուի, աշխատելն ու միտք յոգնեցնելն աւելորդ է համարւում: Գործը իսկոյն վճռուում է, եթէ մինչև իսկ պաշտպանն էլ ներկայ չլինի: Դատարանը մինչև անգամ քննութիւն չի անում, այլ բաւականանում է ոստիկանական պաշտօնեայի վկայութեամբ, որ բնակւում է երկու ամուսինների կեցած քաղաքամասում. իսկ այդպիսի վկայութիւն ձեռք բերելը դժուար բան չէ: Դատարանը, ծանրաբեռնուած լինելով դործերով, աշխատում է, որչափ կարելի է, շուտով վերջացնել այսպիսի խնդիրներ, որոնց հետևանքը միևնոյն ժամանակ է. բանը այն տեղն է հասնում, որ մի առաւօտ Սենի դատարանում, երեք ժամուայ ընթացքում, 294 պսակ է լուծւում: Քանի որ այսպէս հեշտ է՝ բանը, ամուսինները ձգտում են, ամէն մի կամակոր ցանկութիւնից դրդուած, բաժանուել և միանալ ո՛ւմ հետ որ հաճում են՝ գուցէ կրկին անգամ բաժանուելու տենչով: Կարելի է երևակայել, թէ ի՞նչ է պատահում կազմալուծուած ընտանիքի մէջ, երբ խանների հետ: Այս ցաւը վարակել է հասարակութեան բոլոր դասակարգերին, բայց ամէնից աւելի կորոտաբեր կերպով արտայայտւում է բանուորչդասակարգի մէջ: Կամաց կամաց թուլանում է և անհետանում պսակի բարոյական դադափարը, ազամարդը դադարում է զգալուց, որ պսակը սանձ է, որ ըստ պէական զգայականութիւնը ճնշում է. իսկ կիներ կորցնում է այն գիտակցութիւնը, որ ամուսնական միութեան և կենակցութեան

մէջ է իւր համար և պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը»:

Այսպիսի անսպասելի հետեւանքները անհրաժեշտօրէն ազդեցութիւն ունեցան հասարակական կարծիքի վերայ, և 10 տարի անցած արդէն ուրիշ ուղղութիւն է սկսուում, որի գլուխն է անցնում Ալէքսան Դոդէ իւր «Ապահարդանից յետոյ» գրքով: Դրքի նպատակը արտայայտուում է այս խօսքերով. «Ամուսնալուծութեան մէջ տեսնել ընտանիքի իրկութիւնը—աւելի քան անհեթեթութիւն է. ամուսնալուծութիւնը հարցը չի վճռում, այլ քակում է կապը, կտրում է միայն Գորդեան հանգոյցը, և կտրում է կենդանի մարմնի վերայ: Ամուսնալուծութիւնը համարեա անմտութիւն է, եթէ լուծուող պատկից երեխաներ կան»: — Իսկ Բրիէն գրեց իւր յայտնի «Օրօրոցը»: Հիւանդ երեխայի օրօրոցի մօտ հաշտուում են մարդը և կինը, որը երկու անգամ մարդ է փոխել: Այստեղ նորա առաջին անգամ ուշադրութեամբ իրար են դիտում, յուսահատութեամբ և սարսափով նկատում, որ իրար սիրում են, որ նոցա ամուսնալուծութիւնը մի սխալ բան է եղել, և որ գլխաւորն է՝ նորա կապուած են յաւիտեան: Նոցա մէջ եղել է այն կապը, որն անկարելի էր քանդել. դա երեխան է, որը միայն կարողանում է մարդ ու կնոջ սիրտը իրար մօտեցնել:

Այսպիսով Ֆրանսիան, եկեղեցուց առնելով ամուսնալուծական ինդիկները, այդ ինդիկներէն լուծումը հեշտացնելով՝ միայն վնաս կրեց: 1884 թուի օրէնքը բարոյական մեծ հարուած տուեց ոչ այնքան կաթոլիկ եկեղեցուն, որչափ Ֆրանսիական ամբողջ ժողովրդին:

— Ինչպէս յայտնի է անցեալ տարի Վելյնայի կաթոլիկ թեմական առաջնորդ Զվերովիչը մի խիստ շրջաբերական թուղթ էր հանել, որով յորդոր էր կարգում կաթոլիկներին՝ իրենց երեխաներին չուղարկել ուղղափառ ծխական և գրագիտութիւն տարածող դպրոցները, սպառնալով անհնազանդներին զրկել մեղրի թողութիւնից և հաղորդութիւնից: Այս շրջաբերականի պատճառով կառավարութիւնը հեռացրեց նորան պաշտօնից: Այժմ, ինչպէս հաղորդում է „Православно—Русское Слово“-ն, նա նշանակուած է Սանդօմիրի եպիսկոպոս:

Կսենդզները և Լեհացի կալուածատէրը կարելւոյն չափ աշխատել էին շքեղ ընդունելութիւն ցոյց տալ Զվերովիչին. ճանապարհին աղ ու հաց են մատուցել, օրիորդները, սպիտակ հագնուած՝ նորա ոտները տակ ծաղիկներ են տիռել, հաստըսկութիւնը կարգ կարգ շարուած էր եպիսկոպոսի անցնելու ժամանակ և ուրախական կեցցէներով էր ողջունում: Տեղական հո-

գեորահանութիւնը և ագնուահանութիւնը 11 հազար ըուրլու ընծաներ են տուել, ընծայել են նոյնպէս երեք զոյգ ձիաներ և փակ կառք: Ի պատիւ Զվերովիչի հասարակութիւնը ճաշ է տուել, որի ժամանակ արտասանուել են խիստ ոգևորուած ճառեր և կարդացուել է կարգինալ Ռամպոլլայի Հռովմից տուած հեռագիրը:

— Կաթուիկ աշխարհը փետրուարի 7—20-ին տօնեց մի արտաքոյ կարգի յորելեան, այն է Լեոն ժ.Գ. պապի դահաւալութեան քսան և հինգամեակը: Լեոն ժ.Գ. Պիոս Թ.-ին յաջորդեց 1878 թ. փետրուարի 20-ի կոնկլաւի ընտրութեամբ: Մինչև Պիոս Թ. այն նախապաշարմունքը կար, թէ պապերը «Պետրոս առաքելի թուից», 25 տարուց՝ աւելի աթոռակալել չեն կարող. Պիոս Թ. էր, որ առաջին անգամ աւելի ապրեց, այժմ նոյն նախանձելի փառքին արժանանում է և Լեոն ժ.Գ.-ը: Լեոն ժ.Գ. մարտի մէջ կլրացնէ իւր 93 տարին: Նա, ինչպէս ուրիշ շատ անգամ առիթ է եղել յիշելու՝ մեծ խելքի և խոհմութեան տէր անձն է: Վերջին քաղաքական բարդ խնդիրների մէջ նա կարողացաւ եւրոպական տէրութիւններին հետ լաւ յարաբերութիւններ պահպանել: Չնայելով դառամեալ հասակին՝ նա առոյգ է մնացել թէ հոգեպէս և թէ մտքմնապէս, և բոլորին զարմանք է պատճառում խիստ պարտաճանաչութեամբ և իմաստուն կառավարչութեամբ: Լեոն ժ.Գ. նոյնպէս յայտնի է իբրև մատենագիր. նա ուսումնասիրել է ժամանակակից մարդկութեան զբաղեցնող կենսական հարցերը և տուել է դրական պատասխաններ. իսկ գլխաւոր տեղը նորա գրուածքների մէջ հետեւեալ աշխատութիւններն են բռնում. «քրիստոնէական պսակ», «Ֆրանմասոնները», «քրիստոնէական սահմանադրութիւն», «բանուորները» և «Աստուածաշունչի ուսումնասիրութիւնը»:

„Новости“ լրագիրն այս յորելեանի առթիւ գրուած առաջնորդող յօդուածով դրուատում է Լեոն ժ.Գ.-ին. «ճշմարիտ է, ասում է սա, Լեոն ժ.Գ. չկարողացաւ իւր նախորդի օրով ստեղծուած արտաքին պայմանները փոխել, որոնց մէջ ճշմարտութեամբ էր կաթուիկ հոգևորականութիւնը, երբ Հռովմը Իտալիայի թագաւորի ձեռքն անցաւ, բայց փոխարէնը շատ զգուշ և խոհուն քաղաքականութեամբ յաջողեցրեց ընդլայնել Հռովմէական եկեղեցու ազդեցութիւնը և ապահովել նորա վիճակը»: Աւելի նշանաւորն այն է, որ Լեոն ժ.Գ. ժամանակի ընթացքում օտար տէրութիւններին այնպիսի յարգանք ներշնչեց առ ինքն, որ մեծ տէրութիւնները իրանց քաղաքական ներկայացուցիչներին թո-

դին Վատիկանում»։ Ձնայելով որ Ֆրանսիայում կրօնական կարգերի դէմ հալածանքներ սկսուեցին և արձագանք գտան Սպանիայում, սակայն Լեոն ԺԳ. այնպիսի ընթացք ընեց, որ նախարար-նախագահ Կոմբը հարկադրուած էր յայտնել, թէ պապերի հետ ունեցած դաշն անխախտ պէտք է պահուի։ Նորա ժամանակ կաղմուեցան բանուորական ընկերութիւններ, կաթոլիկական այլ հաստատութիւններ հիմնուեցան՝ որոնք կաթոլիկ եկեղեցւոյ ազդեցութիւնը հասարակ ժողովրդի մէջ զօրացնելու համար խիստ կարեւոր գործօններ են. այնպէս որ ներկայ յորեւեանը մի տեսակ յաղթանակի տօն է կաթոլիկ եկեղեցւոյ համար և քաղաքական առանձին արժէք ունեցող դէպք։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ.

Պրոֆ. Դելիշի դասախօսութիւնը աւելի ու աւելի մեծ չափով զբաղեցնում է հասարակութեան և թեր ու դէմ՝ կարծիքները, քննադատութիւնների նկատմամբ տալիս։ Խնդիրն աւելի բարդացաւ ու ընդարձակ շրջանները հետաքրքրութեան առարկայ դարձաւ նորանով, որ Վիլհէլմ կայսրը հարկաւոր համարեց հրատարակութեան համար մի բարձրաստիճան անձի ուղղած իւր նամակով պարզել իւր հայեացքները և իւր դաւանաբանական տեսութիւնները։ Այդպիսի քայլ անելու հարկադրուած զգաց նա իրեն այն պատճառաւ, որ Դելիշի դասախօսութեան միջոցին դիմում էր արել նորան՝ իրը և կրօնի ազատ դարգացման դադարի արին համակրողի և քաջալերողի, և այդպէս առիթ տուել շատերին հետեւեցնելու, թէ կայսրը իւր բարձր հեղինակութեամբ Դելիշի ազատամիտ տեսութիւնների հովանաւոր է հանդիսանում և կասկածի տակ ձգում ճշմարիտ կրօնի անխռիովեղի հիմունքները։ Եւ ահա Կայսրը աշխատում է կասկածները փափաքով հրապարակ հանելով իւր կրօնական հաստատուն համոզումները. ոսկայն բնականաբար նա՝ ինչքան և բաղմակողմանի հմտութեան տէր ու բաւականաչափ տեղեակ կրօնի էութեանը, այնպիսի ներհուն աստուածաբան ու կրօնագէտ չէ, որ հեշտութեամբ լճուէ Դելիշի յուզած բարդ խնդիրները. ուստի նորա երկդիմի բացատրութիւնները նորանոր գայթակղութիւնների և թիւրիմացութիւնների տեղիք են տուել և բանակուին